



ARCHIVE COPY
Please return.

Outreach

Հրատարակութիւն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume XI Number 6
October 1988

OCTOBER ARMENIAN CULTURAL MONTH

ARMENIAN SCHOOL WEEK - OCTOBER 2 - 9

ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՊԱՀԱՆՁ՝ ԸՆԴԴԷՄ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Ստորեւ կ'ուտանք գիտնական եւ մտաւորական Ռաֆայել Իշխանեանի մէկ յօդուածէն որոշ հատուածներ: Գրութիւնը ահագանգ կը հնչեցնէ ի տես Հայաստանի պետական հաստատութիւններէն ներս նահանգող հայերէն լեզուին, եւ հայեցի կրթութեան շարունակական նահանջին:


Աշխարհի աւելի քան 4000 լեզուներից իւրաքանչիւր էլ յարգանքի է արժանի: Հայերէնն էլ բացառութիւն չէ: Եւ ամէն լեզուն նախ յարգւում է այդ լեզուի տէրը հանդիսացող ժողովրդի կողմից, այլապէս ուրիշների կողմից չի յարգուի: Հայոց լեզուն էլ, պարզ է, նախ մենք՝ հայերս պէտք է յարգենք: Նաեւ՝ պահպանենք: Ինչպէ՞ս է մի ժողովուրդ իր լեզուն յարգում ու պահպանում: Գործածելով՝ գրաւոր ու բանաւոր: Առանց դրա ոչ յարգանք կայ, ոչ պահպանում: Եւ ժողովուրդը որքան շատ է գործածում իր լեզուն, որքան շատ ուղորաններում է գործածում, այնքան շատ է յարգում ու պահպանում իր լեզուն:

Ժողովուրդներ կան, որոնք գոյութիւն ունեն իրենց լեզուով: Դրանցից ենք մենք՝ հայերս: Հայ ժողովուրդը հանած հայոց լեզու, չկայ հայ ժողովուրդ: Այս է պատճառը, որ Մ. Նալբանդեանն ու Վ. Տէրեանը մեր ազգի հոգին համարում էին մեր լեզուն, իսկ Իսահակեանն ու Ղազարի ասաց. «Մեր հայրենիքը մեր լեզուն է, Հայաստան նշանակում է հայոց լեզու»: Սա պարզից բարդ թուաբանութիւն է: Աւելին, հայ ազգային արուեստն ու մշակույթը՝ գրականութիւնը, երաժշտութիւնը, կերարուեստը, ճարտարապետութիւնը, փիլիսոփայութիւնը եւ այլն պայմանաւորուած են հայոց լեզուով, հայոց լեզուամտածողութեամբ: Առանց որի չկան դրանք: Ուրեմն, հայ ժողովրդի մէջ որքան պակասում է հայերէն գրաւոր ու բանաւոր հաղորդակցութիւնը, այնքան պակասում է հայ ժողովուրդն ու Հայաստանը:

Հիմա այս պարզ ճշմարտութեամբ զինուած, նայենք մեր առօրեային: Սկսենք աւտոկայաններից՝ Հայաստանի մէջ միջբաղադային եւ միջգիւղական փոխադրակառքերի մեծագոյն մասը հայերէն ցուցանակ չունեն: Ապա՝ փորձէք երեւանում գտնել հայերէն ցուցանակ ունեցող երթուղային թաքսի: Զո՛ւր ջանքեր: Այցելենք մեր հիմնարկութիւնները՝ Սկսէք Կոմիտասի պողոտայում իրար կողքի կանգնած չորս բարձրադասակ հսկայ շէնքերից. ամէնուրեք հայերէնը վտարուած է, նոյնիսկ դրսի ցուցանակներում հայերէն տառ չէք գտնի, եւ միայն շէնքերից մէկի երեք սենեակում մեսրոպեան տառերի կը հանդիպէք («Գիտութիւն եւ տեխնիկա» ամսագրի խմբագրութիւն), եւ դրանով վերջապէս կ'իմանաք, որ Հայաստանում էի, այնպէս, ինչպիսի պոլտեխնիկական հսկայ հիմնարկում ճարտարապետութեան բաժինն մեզ յիշեցնում, թէ որտեղ ենք գտնուում: Իսկ մեր միջնորդութիւնների, պետական կոմիտէների մեծ մասում, հաշուի կենտրոններում, գործարանների մեծագոյն մասում, ահաբեմիայի բնագիտական հիմնարկներում, հիւանդանոցներում, անընդհատ շատացող համա-

(Շար. էջ 5)

ԶԱԻԱԿԴ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԺԱՌԱՆԳՆ Է... ՀԱՅ ԴՊՐՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԷ ՈՐ ՏԵՐԸ ԴԱՌՆԱՅ



**LEAD YOUR CHILDREN
TO NEIGHBORHOOD
ARMENIAN SCHOOLS.
TREASURES AWAIT THEM...**

Զեզի եմ ասում ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անուանի մեռնիմ, ձեր արեւիկն դուրպան, տասը լեզու սորվեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատքը դայիմ բռնեցէք... որքան հարուստ է այդ լեզուն իր բազմապատկար արտայայտութիւններով, դարձուածքներով ու պատկերներով, որքան գործող նրա հասկացողութիւններն ու դատողութիւնները, որքան բնական նրա պատկերները եւ փոխառումները, որքան կատարեալ գիտական անուանումները:

Խ. ԱՌՈՎԵԱՆ

THE ARMENIAN SCHOOL

ON THE OCCASION OF
"ARMENIAN SCHOOL WEEK 1988"

by Meline Karakashian, Ed.S.

Recently, while waiting for my daughter, Lory, at Siamanto Academy in New York, I had occasion to chat with the Director, Mrs. Hourig Papazian-Sahagian, on the subject of the Armenian school phenomenon. She then asked me to write about my experiences in the Armenian schools, having been, in turn, a student, teacher and an administrator through the years.

This week, we celebrate the Armenian school, whether it is in the United States, Lebanon, Europe, South America, Canada, Australia or in Armenia itself. And we celebrate its teachers, as without the teachers who share their knowledge and love of all things Armenian, with our youth, thus passing on that "special feeling" that one receives in Armenian schools. We celebrate the students, with their laughter, their thirst for knowledge, their pranks, and their complaints, who sacrifice their Saturday cartoons and sports and their Friday night parties, to attend Armenian school. Last, but not least, we celebrate the parents who sacrifice their time and who often make greater sacrifices to expose their children to Armenian education.

I believe that what the Armenian School teaches its students is secondary to the spirit and the memories of interpersonal experiences that it instills in its students. These memories do not die, no matter how old or how important the person becomes later on in life.

We cannot predict what Armenian students will remember of their lessons. I can not foresee what my own children will retain from their Armenian education, whether it was in the local schools or later in Siamanto Academy where they deepened their knowledge of Armenian culture along with their dozens of teenage classmates. However, I know this: that the subjective impressions and the deep bond of friendship they forge now, will stay with them forever!

Like the waves of the ocean, generations come and go, teachers come and go but THE ARMENIAN SCHOOL remains, as it has done for centuries on end!

ARMENIAN NATIONAL EDUCATION COMMITTEE HONORED BY AMERICAN COUNCIL ON EDUCATION

The commission of Higher Education, Washington, D.C. will present an award to A.N.E.C. on October 27, 1988 for founding and maintaining the NY-NJ Siamanto Academy, an innovative educational institution designed specifically for Armenian high school-age students. The Commission's accrediting agency, the American Council on Education, has authorized A.N.E.C. to grant 9 college credit recommendations in foreign language and history to Siamanto Academy graduates for extra-institutional college-level training.

(Cont. page 6)

HOLY CROSS CHURCH OF TROY, NEW YORK CELEBRATES ITS 30TH ANNIVERSARY

On Saturday and Sunday, September 24 and 25, 1988, the Holy Cross Armenian Apostolic Church, Troy, New York celebrated the 30th Anniversary of its consecration. On Saturday a "Reunion Nite" was hosted by the Ladies' Guild of the church in the John Sarkis Auditorium, with guests from Mt. Laurel, N.J., Providence, R.I., Springfield, Mass. and W. Palm Beach, Fla.

On Sunday, Divine Liturgy was celebrated by His Eminence Archbishop Mesrob Ashjian, followed with a banquet at the Century House, Latham, N.Y.

Mr. John Karian, Chairman of the Board of Trustees welcomed all those present and turned the program over to Master of Ceremonies, Harry Mardigian.

Remarks were heard from Bishop Ball from the Diocese of the Episcopal Church of the Capital District, Rev. Hammond, Pastor, United Armenian Calvary Congregational Church, Troy, N.Y., Rev. Khatchig Megerdichian, Pastor, Holy Cross Armenian Apostolic Church, Troy, N.Y. and John Khachadourian, Chairman of the 30th Anniversary Steering Committee.

A proclamation acknowledging the 30th Anniversary was read and presented to Der Hayr by Martin Mahar, Deputy Mayor of the City of Troy.

Vocal selections were sung by the "Ani Chorus" under the direction of Mrs. Syran Lighter with solos rendered by Hrant Bardakjian and Seta Deyirmenjian.

Mrs. Zepure Ovigian was honored by Serpazan Hayr and the community for her 30 years of service to the Church and her 20 years as Chairman of the Holy Cross Church Ladies' Guild.

Mrs. Syran Lighter, Choir Director, was also honored by Serpazan Hayr and the Church Choir for her 64 years of service to her Church and 30 years of devoted service to the Holy Cross Armenian Apostolic Church and the Church Choir.

His Eminence Archbishop Mesrob Ashjian, assisted by Alice Khachadourian, Recording Secretary of the National Association of Ladies' Guilds, presented a Certificate of Achievement and a Pendant with the logo of the National Association to the following Ladies' Guild members who have served their church faithfully for 25 years or more:

- Eliza Aprahamian
- Flora Malkonian
- Santought Malkonian
- Mary Minassian
- Zepure Ovigian
- Arevnaz Soutlianian
- Siranoush Sukljian

All those present were enlightened by a very inspiring message delivered by His Eminence Archbishop Mesrob Ashjian.

The program closed with the singing of "Giligia".



The recipients of the N.A.L.G. awards: Left to right: Mary Minassian, Flora Malkonian, Santought Malkonian, Arevnaz Soutlianian, Zepure Ovigian.

OUTREACH

Archbishop Mesrob Ashjian
Prelate
Mardo Soghomian - Editor

OUTREACH (USPS 426-490) is published monthly by the Prelacy of the Armenian Apostolic Church of America, 138 East 39th Street, New York, New York 10016, (212) 689-7810. Unsolicited manuscript will be considered for publication; please include a stamped, self-addressed return envelope. We reserve the right to edit articles in order to conform to space limitations. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America, Second class postage paid at New York, N.Y. 10016.
Postmaster: Send address changes to Outreach, 138 E. 39th St. New York, N.Y. 10016

A.R.E.C. HOLDS TRI-REGIONAL TEACHER TRAINING SEMINARS

The Armenian Religious Education Council of the Prelacy, recently held Tri-regional Teacher Training Seminars in Philadelphia, Pa; Worcester, Mass; and Dearborn, Mich. The three 1-day Workshops were held on Saturdays during the month of September.

Participants sat through three lectures, absorbed by the enthusiasm of the speakers who spoke with conviction, authority and Godly love for their people.

Rev. Antranig Baljian, Pastor of St. Gregory Armenian Church in Indian Orchard, Massachusetts, gave the spiritual significance of the 4-part Badarak. His explanation gave new meaning to the Liturgy. On a more personal note, his presentation so profoundly touched me, that upon entering the Nave of Sts. Vartanantz the following day, I truly touched the hemline of heaven as I stood in the door — heaven's gates. His revelation of the significance behind all this symbolism allowed me also to enter into true worship, more so than ever before. As I watched Hayr Anuvshavan celebrate the Divine Liturgy, I studied his vestments and recalled what I learned just the day before in Philadelphia: That as a soldier who must be fully-protected and prepared before battle, so too, must the celebrant wear the full armor of God enabling him to extinguish all the flaming missiles of the evil one. The high collar called the "vagas", reminded me of the story of the Good Shepherd, who, having lost one of His sheep, searched and found it, wrapped it around His shoulders and returned to His flock, rejoicing that He found His one sheep who strayed.

The "vagas" is like the sheep and like the Good Shepherd, the Priest is anointed to do the same.

Professor Varouj Mazmanian spoke on the topic "How To Use the Sunday School Hour Most Effectively" in Philadelphia. This same theme was covered by Pastor Steven Macchia in Worcester and by Aghavni Bashian in Dearborn. It is interesting to point out that although the speakers were given the same topic, they were not aware of the contents of one another's texts. Yet, their message was the same in that the effective teacher is one who: relies on the Holy Spirit, prays, comes prepared, is sensitive to the individual needs of the student, relates the lesson to the student's life and disciplines with love.

Aram Stepanian, Archdeacon of St. Stephen Armenian Church in Watertown, Massachusetts, taught us "How to use the Bible In the Sunday School Classroom". He began by quoting Karekin Vehapar who described the place of honor the Bible held in his own personal life. He taught us to compare Bible heroes with Armenian Church heroes, to present the Bible through Liturgical Psalms and Sharagans and through Church Fathers — like St. Mesrob — who looked upon the Bible with reverence and held it in high esteem. He ended by saying that every Armenian Church is built on the Word of God: When the groundbreaking takes place, a Bible is set in the hollow of the earth as the foundation upon which the new Church is built.

"How To Use Craft and Curriculum Most Creatively" was presented by AREC Coordinator, Joanna Baghsarian. Material such as a "My Prayer Coloring Book" with Armenian prayers for Primaries, a new Christmas Pageant, "Handwork and Action Rhymes" for Preschoolers, and "Talksheets" that help Junior and Senior High School students deal with and think through values, morals, dating, love, peer pressure, stress, drugs, alcohol, etc., were received with great enthusiasm. Teachers were also given "tips" on methods in teaching Sharagans, on how to use Armenian Church Vocabulary Flashcards followed by how to have an end-of-the-year "Word Bee" with the words they learned. Ways of making your Sunday School hour more colorful and inviting were endless!

The participants, without exception, enjoyed a day of inspirational teachings by experts. They broke bread together with glad and sincere hearts and enjoyed the company and favor of the people. They came to be guided as keepers of the faith, to receive knowledge as seekers of Godly wisdom and to be better equipped to direct, to teach, to create and yes, even to sing for the sake of the students placed in their care.

Before departing for the final Seminar in Dearborn, His Eminence Archbishop Mesrob Ashjian gave me his blessings, consecrating the entire Seminar Project and 1988-89 with these words of hope: "Some teachers plant seeds of faith, others water. We may not see the results immediately. Just open their minds and God will do the rest for it is He who makes the seedling grow to full maturity..."

JOANNA BAGHSARIAN
Director of Christian Education,
AREC

ՊՈՍԹԸՆԻ Ս.ՍՏԵՓԱՆՈՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԸ

Ուրբաթ, 23 Սեպտ. 1988-ին, Պոսթընի Հայ Կեդրոնի դահլիճին մէջ, շուրջ 500 ազգայիններու ներկայութեան, նշուեցաւ Մեծազոյն Պոսթընի Ս. Ստեփանոս Ազգ. վարժարանի հիմնադրութեան 5-րդ տարեդարձը:

Հանելի եւ միանգամայն խանդավառիչ էր ներկայութիւնը բազմաճարիւր հայրենակիցներու, որոնք իրենց ներկայութեամբ իսկ հաստատեցին՝ թէ Հայ դպրոցը լուսանցքային երեւոյթ է այլեւս ամերիկահայ կեանքէն ներս, եւ թէ կարելի է եւ հնարաւոր է ստեղծել ու պահել Հայ դպրոցը՝ ուր Հայ մանուկը պիտի ստանայ Հայեցի եւ տոհմիկ դաստիարակութիւն, միաժամանակ պատրաստուելով ամերիկեան կեանքի պահանջներուն: Այս ոգիով ալ հանդիսութիւնը վարեց Ս. Ստեփանոս վարժարանի տնօրէն խորհուրդի կողմէ՝ Պրն. Գէորգ Տօնապետեան, «Հայրենիք»-ներու վարիչ-Տնօրէնը, ինքն ալ վաստակաւոր ուսուցիչ եւ տնօրէն: Օրուան ձեռնարկին հովանաւորութիւնը ստանձնած էր թեմիս Առաջնորդը՝ Բարձր Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշտեանը, որ անձամբ ներկայ գտնուեցաւ հանդիսութեան, զնահատեց ներկայներուն սրտազին մասնակցութիւնը, օրհնեց այն երիտասարդները՝ որոնք կարելոր նուիրատուութիւնով մասնակցեցին «մոմավառութեան» եւ իր խօսքին մէջ ըսաւ.—

«Պատուական ժողովուրդ Պոսթընի եւ չրջակայից»

Յատուկ ուրախութիւն ունիմ ներկայ գտնուելու Ս. Ստեփանոս Ազգային վարժարանի հիմնադրութեան 5-րդ տարեդարձի հանդիսութեան, եւ, իմ եւ Ազգային իշխանութեան կողմէ Ձեզի ներկայացնելու իմ շնորհաւորանքս այս գեղեցիկ իրագործումին դիմաց: Ես, որ գիտեմ մեր թեմին կացութիւնը, եւ ներգոյակ դժուարութիւնները՝ առաւել եւս կը զնահատեմ Ձեր հովիւին, Հոգաբարձութեան, եւ դպրոցի զանազան մարմիններուն ճիշդ եւ քաջութիւնը»: Ապա, օրինակ բերելով Մ. Գալիլէոսի «Մամբէ Արբան», Արբանը Հայրը վեր առաւ Ս. Մեսրոպի 36 զինուորներուն մեծ գործը Հայ հոգիի պաշտպանութեան գծերուն վրայ, շեշտեց թէ Հայ լեզուն նահանջի մէջ է սփիւռքի մէջ անշուշտ, բայց նոյնիսկ մեր Հայրենիքին մէջ, եւ յոյս յայտնեց, որ Ղարաբաղեան այս օրերու մթնոլորտին մէջ, Հայաստանի հայերը պիտի իրենց զաւակները դուրս քաշեն Ռուսական դպրոցներէն, եւ առաւել կերպով գործածեն Հայրենիք՝ իբրեւ պետական եւ առօրէական լեզու: Իր խօսքի աւարտին՝ Սրբազան Հայրը կոչ ուղղեց Պոսթընի Հայութեան, որ նիւթական ամէն տեսակի հնարաւորութիւն ունի նեցուկ կանգնելու Հայ դպրոցին, եւ յառաջիկայ ամիսներուն, լայնօրէն մասնակից դասակներու հանգանակութեան, որուն արդիւնքով Ս. Ստեփանոս Ազգ. վարժարանը պիտի ունենայ իր սեփական շէնքը: Իր կողմէ՝ Սրբազանը յայտնեց, թէ ըստ ամենայնի զօրավիզ է Հայ դպրոցի գաղափարին, որովհետեւ, Յ. Ծիրազի հետ կը հաստատայ՝ թէ Հայ եկեղեցին առանց Հայ դպրոցի ապագայ չունի, եւ թէ՛

«Հայոց եկեղեցին՝ զանգ Հայ Դպրոցը՝ Լեզուակ է»:

STATEMENT OF OWNERSHIP, MANAGEMENT AND CIRCULATION			
Required by 39 U.S.C. 3685			
1. Title of Publication	2. Issue Date	3. Issue Frequency	4. Issue Period
OUTREACH	Sept. 1, 1988	MONTHLY	Sept. 1, 1988
5. Complete Mailing Address of the Headquarters or General Business Office of the Publisher (Not necessarily the same as above)	138 East 39th St. New York, NY 10016		
6. Full Name and Complete Mailing Address of the Publisher, Editor, and Managing Editor (Not necessarily the same as above)	PRELACY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH 138 East 39th St. NY NY 10016		
7. Full Name and Complete Mailing Address of the Owner (Not necessarily the same as above)	Mardo Soghomian, 138 East 39th St. NY NY 10016		
8. Full Name and Complete Mailing Address of the Principal Owner (Not necessarily the same as above)	NONE		
9. For Completion by Nonprofit Organizations Authorized to Mail at Special Rates (USPS Form 3526 only)	The purpose, function, and nonprofit status of this organization and the exempt status for Federal income tax purposes (check one)		
<input type="checkbox"/> Has Not Changed During Preceding 12 Months <input type="checkbox"/> Has Changed During Preceding 12 Months (If changed, publisher must submit explanation of change with this statement.)			
10. Extent and Nature of Circulation	Average No. Copies Each Issue During Preceding 12 Months	Actual No. Copies of Single Issue Published Nearest to Filing Date	
A. Total No. Copies (Net Press Run)	11,000	11,000	
B. Paid and/or Requested Circulation			
1. Sales Through Dealers and Carriers, Street Vendors and Counter Sales (Include Mails)	10,000	10,200	
2. Mail Subscriptions (Include Mails)	10,000	10,200	
C. Total Paid and/or Requested Circulation (Sum of 10B1 and 10B2)	10,000	10,200	
D. Free Distribution by Mail: Carriers or Other Means: Samples, Complimentary, and Other Free Copies	200	200	
E. Total Distribution (Sum of C and D)	10,200	10,400	
F. Copies Not Distributed	800	600	
G. TOTAL (Sum of E, F and G) (Must equal net press run shown in 10A)	11,000	11,000	
I certify that the statements made by me above are correct and complete.			
Signature and Title of Editor, Publisher, Business Manager, or Owner		M. Soghomian, Editor	

գործակցականների զգալի մասում, վառիչների եւ այլ իրերի նորոգման կրպակների շատ ցուցանակներում, Հայաստանի արդիւնաբերութեան տարբեր արտադրանքի շատ ու շատ պիտակներին եւայլն, չէ՞ որ մաշտոցեան տառը հազուադէպ երեւոյթ է կամ բնաւ գոյութիւն չունի: Իսկ հայերէն հեռախօսացանկի մասին վաղուց մոտացել ենք:

Երեւանի հիմնարկներին պետական արխիւի ստացած փաստաթղթերի շուրջ 95 տոկոսը հայերէն չէ. դա Երեւանի պաշտօնական ներքին գրադրութեան պատկերն է:

Հայաստանում զկան կիրիթատրոնների հայերէն տպուած տոմսեր: Այդ հարցով երեք հոգով՝ տողերիս հեղինակը, մի քիմիկոս եւ մի նկարիչ, դիմեցինք կիմեմատոգրաֆիայի պետական կոմիտէի նախագահի տեղակալին.

— Ինչո՞ւ Հայաստանի կիրիթատրոններում հայերէն տպուած տոմսեր չկան:

Պատասխանեց.

— Բա ի՞նչ էք ասում:

— Որ հայերէն տոմսեր լինեն:

— Ոչ մի հանրապետութիւնում իրենց լեզուով կիրիթատրոններ չկան:

Ես ցոյց տուցի իստոնիայից, Լատուիայից, Լիտուանից, Ուրբարիայից, Ատրպէյճանից բերածս կիրիթատրոնները բոլորը տեղի ազգային լեզուներով տպուած: Տեղակալն ասաց.

— Նրանք նացիոնալիստ են:

Նոյն հարցով դիմեցինք օֆերայի տնօրէնին (այն ժամանակ ԸՆԿ. Չէքիճեանն էր).

— Ինչո՞ւ Հայաստանում օֆերայի տոմսերը հայատառ չեն:

Պատասխան.

— Հայերէն տառերը չեն յարմարում մեր տոմսերի մէջ:

— Իսկ վրացերէն տառերը:

— Նոյնպէս չեն յարմարում:

Ցոյց տուցի թրիլիսից բերածս վրաց օֆերայի տոմսը՝ վրացատառ: Եւ ասացի, որ եղածս հանրապետութիւններում (Մերձպալթեան, Ուրբարիսը եւայլն) նոյնպէս օֆերայի տոմսերը ազգային լեզուների տառերով են տպուած: Տնօրէնի վրայ ազդեցութիւն չթողեց:

Այսպիսի դէպքերում, երբ ասում են, որ ըստ Հայաստանի սահմանադրութեան 72-րդ յօդուածի, այստեղ պետական լեզուն հայերէնն է, կամ գարմանում են, կամ ներողամիտ ժպտում (այսինքն, դա ի՞նչ նշանակութիւն ունի):

Անհասկանալի է, միթէ հնարաւոր չէ ստեղծել մի օղակ, մի խորհուրդ, ընդամենը երեք-չորս մարդուց բաղկացած, որը հսկի Հայաստանում գտնվող ցուցանակներ, տոմսերի մէջ պետական լեզուի օրէնքը պահպանելուն: Ի հարկէ, սեփական ազգային լեզուի նկատմամբ այս, մեղմ ասած, անտարբերութիւնը հայերիս ներսում արմատներ ունի, դրա արտայայտութիւնն են թէկուզ մեր անձնական ստորագրութիւնները, բնակարանների ցուցակները, ծոցատետրերի գրանցումները, որոնք մեծ մասամբ հայերէն չեն: Կամ գանձահարէք երեւանեան պատահաբար ընտրուած հեռախօսային 10 համարով, դրանցից միայն մէկը, առաւելագոյնը երկուսը հայերէն այդ կամ լսում են կ'ասեն:

Կենտրոնական թերթերը վերջերս շատ են գրում ազգային լեզուների խնդիրների մասին: Օրինակ, 1987 թ. Մայիսի 7-ին «Փրակա»-ն գրեց, որ Հայաստանում հայոց լեզուի գործածման շրջանակը գնալով նեղանում է (պարզ է, թէ շրջանակի նեղանալը վերջում ինչի է յանգում): Նման հարցերի մասին յատկապէս շատ գրուեց «Լիթերատուրայա Կազեթ»-ում: Ուզում եմ բերել այդ թերթի 1987 թ. թիւ 10-ից մի քաղուածք. «Նր երկրի նկատմամբ իսկական սէր չի կարող լինել առանց իր լեզուի նկատմամբ սիրոյ գոյութեան: Այն մարդը, որ անտարբեր է իր ազգային լեզուի նկատմամբ, վայրենի է: Նա վնասակար է իր բուն հուրիւսումը, որովհետեւ նրա անտարբեր վերաբերմունքը լեզուի նկատմամբ բացատրուում է իր ժողովրդի անցեալի, ներկայի եւ ապագայի նկատմամբ նրա ունեցած լիկատար անտարբերութեամբ»:

Ի հարկէ, հայոց լեզուի վտարումը մեր շատ հիմնարկներից, ցուցանակներից, տոմսերից, տասնեակ հազարաւոր հայ ընտանիքներից, մենք ինքներս՝ հայերս ենք անում, ու ոչ ոքի չմեղադրենք, կան յիշածս հանրապետութիւններում ազգային լեզուն պահպանելու շատ դրական օրինակներ:

Այս կարգի իրողութիւնների վերլուծութիւնները յանգեցնում են ազգային դպրոցի հարցին, որի մասին էլ մի շարք անգամ գրուեց. «Լիթ. Կազեթ»-ում: Երբ Երեւանի շատ հիմնարկութիւններում, ձեռնարկութիւններում հարցնում ենք, թէ ինչու նոյնիսկ նոյն շէնքի մի սենեակից միւսը ուղարկուող գրութիւնը կամ սովորական ռոճկացուցակը հայերէն չի գրուում, պատասխանում են՝ «Մեր տնօրէնը հայկական կրթութիւն չունի» կամ՝

«Մեր բաժնի վարիչը հայկական կրթութիւն չունի» եւ կամ «Մեր քարտուղարուհին հայկական դպրոց չի աւարտել, եւայլն»:

Այսօր մեր հանրապետութիւնում տասնեակ հազարաւոր հայ երեխաներ գնում են ոչ հայկական դպրոցներ (միայն Երեւանում՝ մօտ 50 հազար), նրանք ոչ մի հանրակրթական առարկայ հայերէն չեն սովորում, իսկ հայոց լեզուն սովորում են որպէս օտար լեզու, քիչ ժամերով, այն էլ ոչ պարտադիր (շատեր ազատուած են նաեւ այդ քիչ հայերէնից): Գիտենք, որ դպրոցը պատերն ու շէնքը չեն, այլ՝ աշակերտները: Աշակերտը պակասում է, դպրոցն է նուազում, աշակերտ չկայ, դպրոց չկայ: Օրինակ, Համալսարանային երկրորդ պատերազմից առաջ Պաքուում 76 հայկական դպրոց կար, այժմ ոչ մէկը չկայ: Ինչո՞ւ: Մէնմիակ պատճառով՝ հայերի իրենք հրաժարուեցին իրենց զաւակներին հայկական դպրոց ուղարկել: Թիֆլիսում պատերազմի սկզբում կար 40 հայկական դպրոց, այժմ 4 թէ 5-ն են մնացել, այն էլ լղարիկ, մարող, եւ դարձեալ միեւնոյն պատճառով, այսինքն հայ ծնողները հրաժարուում են իրենց զաւակների հայկական կրթութիւն տալ: Նոյն այդ պատճառով փակուեցին Գրասնտարի երկրամասի, Մայկոպի, Արմաւիրի, Ռոստովի շրջակայքը եւ այլ վայրերի աւելի քան 200 հայկական դպրոցներ: Եւ նոյն պատճառը, նոյն մեքենան այսօր Երեւանում է գործում, անգամ հայ գրողներ, հայոց լեզուի, հայ գրականութեան, հայ ժողովրդի պատմութեան շատ մասնագէտներ, հայկական դպրոցների ուսուցիչներ իրենց զաւակներին ոչ հայկական դպրոց են ուղարկում, էլ չեն խօսում մեր երաժիշտների, տեխնիկական գիտութիւնների ներկայացուցիչների, ինժեներների, բժիշկների եւ այլ կարգի մտաւորականների մասին, որոնք հայկական կրթութեան, հայոց մանկապարտէզի եւ դպրոցի մասին լսել անգամ չեն ուզում: Շատ հայ ծնողներ մինչեւ 1000 ռուբլի կաշառք են տալիս, միայն թէ իրենց երեխան յանկարծ հայկական մանկապարտէզ ու հայկական դպրոց չգնայ: Եւ խնդրեմ, եթէ 1936 թ. շուրջ 150 հայ երեխայ էր Երեւանում յաճախում միակ ոչ հայկական դպրոց (քաղաքի 1000 բնակչին՝ մէկը), ապա 1976-ին դրանց թիւը մօտ 30 հազար էր, 81-ին՝ 39,502, 84-ին՝ 45,818, 88-ին՝ 49,50, (քաղաքի 20 բնակչին՝ մէկը):

Ինչպէս տեսնում ենք, միայն Երեւանում անցած 50 տարուայ մէջ հետեւողականորէն աճել է ոչ հայկական դպրոց յաճախող հայազգի աշակերտների քանակը: Պարզ է, որ ոչ հայկական կրթութիւն ստացած այդ հայազգիների մայրենի, առաջին լեզուն հայերէնը չէ, աւելին՝ հայերէնը նրանց մեծ մասի համար խորթ, անհաճ լեզու է: Եւ նրանք, զբաղեցնելով պաշտօններ, հիմնարկներից, գործարաններից վտարում են իրենց համար խորթ այդ լեզուն: Սա է փաստը, որ ամէն քայլափոխի հանդիպում ենք: Եւ ստացուել է կախարդական շրջանակ. ծնողները իրենց զաւակներին ուղարկում են ոչ հայկական դպրոց՝ պատճառաբանելով, որ հայկական կրթութեամբ անձանց աշխատանքի չեն ընդունում, այդ զաւակներն էլ իրենց ոչ հայկական կրթութեամբ ղեկավար դառնալով, աւելի են վտարում հայերէնը եւ աւելի խստորէն են պահում հայկական կրթութեամբ մարդ չընդունելու միտումը: Ո՞րտեղ, ինչպէ՞ս պէտք է խախտուի այս կախարդական շրջանակը:

Անցած 50 տարում հայերի ոչ հայկական կրթութեան ծաւալը մեր հանրապետութիւնում տարեց տարի աւելցել է, ոչ մի լուրջ արգելք չի դրուել: Ի՞նչ յոյս կայ, որ յաջորդ 50 տարիներն էլ նոյնը չեն լինելու: Նման յոյսի նշաններ չեն նկատում: Իսկ թէ զարգացումը նոյն կերպ շարունակուի, ինչպէս վիճակագրական հաշուումներն են ցոյց տալիս, 2020-2030-ական թուականներին Երեւանում Հայկական դպրոցներ մարած կը լինեն, ինչպէս որ մարել են շատ քաղաքներում:

Չարմանում ես, թէ ինչպէս է քնած խղճով երեւանցի հայր ամէն միջոց գործադրում, որ իր երեխան տեղաւորուի ոչ հայկական մանկապարտէզում ու դպրոցում, գրկում նրան ազգային կրթութիւնից, մտածելակերպից, ինչպէս որդիների ու դուստրերի հետ հայերէն չի խօսում իր ընտանիքում, մեռցնում է հայերէնը, իսկ յետոյ ձեռքը բարձրացնում է ու գոռում՝ Լարաբաղ: Կեղծաւորութեան ի՞նչ աստիճան:

Արդեօք կ'արթնանա՞յ մեր հայ ծնողների խիղճը, արդեօք կը հասկանա՞ն նրանք, որ իրենց զաւակներին փոքրուց հայկական կրթութիւնից, հայ լեզուամտածութիւնից, հայութիւնից զրկելով՝ սպանում են իրենց բաժին հայերէնը, իրենց ուժերի չափով մեռցնում են 5000-ամեայ մեր լեզուն, այսինքն՝ ազգային ինքնասպանութիւն են գործում. կրկին ու կրկին յիշենք՝ առանց հայոց լեզուի եւ հայկական դպրոցի չի կարող լինել հայ ժողովուրդը եւ Հայաստան:

Փրոֆ. Ռաֆայել Իշխանեան

SARKIS TESHIOIAN APPOINTED MASSACHUSETTS DISTRICT JUDGE

Mr. Sarkis Teshoian, an attorney in Worcester, MA, was recently appointed as District Judge by Governor Michael Dukakis. Mr. Teshoian has been a community leader and a devoted member of the Armenian Apostolic Church. He has served the church in many capacities for more than two decades.

In 1969 and 1983 Mr. Teshoian was the Chairman of the Steering Committee to receive Catholicos Khoren I, and Karekin II, to the United States. From 1971-79 he was a delegate to the National Representative Assembly, and in 1979-80, and 1980-82 he was the Chairman of the Prelacy Executive Council. He also attended the World Assembly of the Catholicosate of Cilicia in 1977, as a delegate from eastern U.S.A., and participated in the convocation that elected Karekin II as Catholicos. Finally, Mr. Teshoian served as the North American Representative to the nine membered Central Executive Council of the Great House of Cilicia.



He has also held a number of important positions as in professional and other organizations. He has served as Director of Family Health and Social Service Center, and as Director of The National Conference of Christians and Jews in Worcester County. He has been a member of the American Bar Association, Massachusetts Bar Association, Worcester County Bar Association and the Worcester Committee on Foreign Relations. He has also received the St. Thomas Moore Society Plaque as an Ecumenical Award, in 1980.

We wholeheartedly congratulate Mr. Sarkis and Mrs. Ardemis Teshoian. They have both been outstanding members of our community and the Governor could not have made a better choice by appointing Mr. Teshoian as District Judge. We wish Mr. Teshoian success in his new and important position.

ONNIC MARASHIAN PROMOTED TO NEW POSITION

According to Michael Hehir, executive vice president, McGraw-Hill Financial Services Co., Onnic Marashian is appointed editorial director — Western Hemisphere for Platt's Energy Services. He is responsible for Western Hemisphere editorial input for the newsletters, wires and online srVICES published by the Platt's group. In addition to his new responsibilities, he continues as editor-in-chief of Platt's OILGRAM NEWS, a post he has held since 1973.

Prior to that, Mr. Marashian was OILGRAM NEWS bureau chief in Washington, D.C. and McGraw-Hill World News correspondent in Washington and London. He joined McGraw-Hill in 1957 when he set up World News' Middle East Bureau in Beirut. Earlier, he was a free lance correspondent for the Christian Science Monitor and McGraw-Hill World News, and an associate editor at the Beirut Daily Star.

Onnic Marashian holds a bachelor of arts degree in journalism from the American University in Cairo and a master of arts degree from Syracuse University.

Marashian is a current member and a former chairman of the Prelacy Executive council, and has been a devoted member of the Armenian Apostolic Church, and has served the Armenian community, in many capacities. We wholeheartedly congratulate the Marashian family, and we wish Mr. Marashian success in his new position.

PRELACY LECTURE SERIES

ON THE OCCASION OF
THE ARMENIAN CULTURE MONTH
THE FEAST OF HOLY TRANSLATORS

Date: Friday, October 28, 1988
Lecturer: Prof. Robert Thomson
Topic: Agathangelos

Date: Friday, November 4, 1988
Lecturer: Prof. Nina Garsoian
Topic: Pavsdos Puzant

Date: Sunday, November 13, 1988
Lecturer: Dr. Levon Avdoyan
Topic: Zenop Klag
Time: 4 p.m.

Date: Friday, November 18, 1988
Lecturer: Prof. Peter Cowe
Topic: Yeghishe

ALL LECTURES START AT 7:30 P.M.
(Except November 13th)


AT

THE VAHAKN & HASMIG HOVNIANIAN HALL
THE PRLACY
138 EAST 39TH STREET
NEW YORK CITY

**KHIRIMIAN HAYRIG
POSTER WINS AWARD**

The Type Director's Club, a communications design group in New York City, has awarded to Glazer and Kalayjian, Inc., an award for typographic excellence for their poster design announcing a gathering to celebrate Khirimian Hayrig's life. Glazer and Kalayjian, Inc. was asked to design the poster by His Eminence Archbishop Mesrob Ashjian, for the event held at St. Bartholomew's Church in New York City, on November 8, 1987.

The Type Director's Club is a well known and a very well respected organization amongst design professionals, and it is thus a great honor to be selected for this award. This is the 34th year that the Type Director's Club has organized an awards show, and this year there were over 5,000 entries from roughly 18 countries. This year only 191 of the entries were selected to receive an award and appear in their annual book entitled *Typography 9*. The award winners are also included in six separate travelling shows which originate throughout the world and cover such areas as North America, Europe, Japan, Australia and New Zealand.



THE AWARD PRESENTED TO THE KHIRIMIAN HAYRIG POSTER

**Norikian Exhibit
Oils and Watercolors**

PRELACY OF THE ARMENIAN
APOSTOLIC CHURCH OF AMERICA
138 EAST 39th STREET
NEW YORK, N.Y.

Exhibition Hours:

November 14 - 20, 10:00 a.m. - 5:00 p.m.

And by appointment



DECORATIVE WALL PLAQUE

In Honor of the Heroes of
KARABAGH 1988

Bronze Hand Crafted

13.5" x 9" 5 lbs.

Artist: GRIGOR GEVORKYAN

PRICE: \$47.00 (Including Postage)

(All proceeds will be allocated
to the Karabagh cause)

To Order: Please mail your check to:

Armenian Prelacy Bookstore
138 East 39th Street
New York, N.Y. 10016

ՋԱԽՉԱԽՈՒԱԾ ԵՂԵԳ

«Ջեղէզն ջախջախեալ ոչ փշրեսցէ»
Մատթ. 12:20

Թէ ջախջախուած եղէգի պէս ոտքերուդ տակ
Աղեկտուր, սուր ցաւերով ես գալարուիմ,
Վերցուր զիս, Տէ՛ր, չփշրուիմ ես միայնակ,
Լոյսէդ չըմպած, պապակ սրտով չխեղդուիմ:

Շուայտ բարբեր, տարփանքներ սին ու խարուսիկ
Փշրել են հէք եղէզն այն արարչական,
Որ խոստացած էր քու փառքիդ, երգիդ հեզիկ,
Մեղրահնչիւն սրինդն ըլլալ հմայական:

Վերցուր զիս, Տէ՛ր, հրաշածոր քու մատներէդ
Կեանք տուր ինծի, շունչ տուր ինծի,
ով կենսաշունչ,
ով կենսաշունչ,

Հեղ մ'ալ դառնամ ձեռքիդ սրինգ ուրախաւէտ,
Ու նուազեմ մեղեդիներդ ես երկնաշունչ:

Ներսէս Քհնյ. Մանուկեան
Օգոստ. 15, 1988

**ARMENIAN NATIONAL EDUCATION
COMMITTEE HONORED**

(Cont. from page 1)

cepted in 4,500 colleges and universities nationwide. The NY-NJ Siamanto Academy has graduated dozens of students during the 8 years of its existence. The training that Academy students receive involves an intense 3-year cycle of Armenian studies in Armenian history, language and literature. Classes are held one day a week in New York City.

Dr. Steve Checkosky and Mrs. Hourig Papazian-Sahagian, co-founders of Siamanto Academy and Mr. Ardash Hamparian, Chairman of A.N.E.C. will accept the award on behalf of the Academy Board.

Recently an adult education extension course was added to the Siamanto Academy program. Armenian history is being covered during Fall semester as a survey non-credit course. Similarly, language and conversation will be offered in the Spring semester, beginning January 10, 1989.

**ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
ՏԱՐԵԴԱՐՁԸ ԳԷՄՊՐԻԾԻ ՄԷՋ**

Սեպտեմբեր 17-18 շաբաթավերջին, աւելի քան հազար հայորդիներ համախմբուեցան Գէմպրիճի Հայ Կեդրոնի շրջափակէն ներս, սոնելու Մուսա լերան հերոսամարտի 73-րդ տարեդարձը:

Հայկական Կիլիկիոյ այդ աննշան ծայրամասը՝ Մուսա լերան վեց փոքրիկ գիւղերը, հագրւ թէ յիշատակութեան արժանանային պատմութեան ու աշխարհագրութեան տոմարներուն մէջ: Բայց անոնք մինչեւ այսօր կը շարունակեն ոգեւորել աշխարհասփիւռ հայութիւնը, որ, մինչեւ Հիւսիսային Ամերիկայի այս ափերը, հեռու Մուսա լերէն, հեռու երկրորդ Մուսա լեռ Այնճարէն, հեռու Հայրենիքէն, չի վարանիր հարիւրաւոր մղոններով ճամբայ կտրել, վերահաղորդուելու Մուսա լերան պատգամով, վերանորոգելու իր հայկական կենսանիւթերը որոնց կարիքը մեծ է օտարացնող այս ափերուն:

Շաբաթ երեկոյեան սկսաւ խրախմանքը, երբ օրուան հանդիսավար Պրն. Պողոս Ճապրայեան հրաւիրեց արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանը որ օրհնէ սեղանը: Աւելի ուշ խօսք առնելով, Սրբազան Հայրը անդրադարձաւ օրուան խորհուրդին, նշելով թէ պարզ գուգադիպութենէ մը աւելին է որ Մուսա լերան հերոսամարտը եւ ինչպէս վերացի տունը նոյն օրերուն կ'իյնան: Ան նաեւ շեշտեց անհրաժեշտութիւնը նման սոնախմբութիւններու, որոնք իրար մօտ կը բերեն Հիւսաային Ամերիկայի տարածքին սփռուած հայութիւնը, եւ յայտնեց թէ ապագային առաջնորդարանը նման տարեկան սոնակատարութիւն մը եւս կը ծրագրէ Յունուարի համար, Յիորիտայի մէջ նշելով Մշոյ Սուրբ Կարապետի տունը:

Կիրակի կէսօրին, պատարագէն ետք, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Նաթակ Ծ. Վրդ. Յակոբեան օրհնեց հերիսան որ ապա բաժնուեցաւ սեղաններուն:


Ճաշէն ետք խօսք առաւ օրուան հանդիսավար Պրն. Մուշեղ Գարագաշեան, որ շեշտը դրաւ «Լեռն կանգուն» պահելու վճռակամութեան վրայ, յատկապէս այս օրերուն, հայկական լեռնաշխարհի միւս ծայրամասի՝ Արցախի հայութեան խիզախումները մեր աչքին ունենալով:

Ապա, խօսքը տրուեցաւ բանախօսին՝ քաղաքական գիտութեանց մագիստրոս եւ Լոս Անճելըսի «Ասպարէզ» օրաթերթի տնօրէն Ընկ. Ժան Գոսազեանի: Ան կեդրոնացաւ հերոսամարտներու կարեւորութեան վրայ որպէս անցեալէն եկող ոգեւորութեան աղբիւր ու ներկան արժեւորող տուեալներ: Ան նաեւ անդրադարձաւ ներկայիս մղուող արցախեան հերոսամարտին եւ Սփիւքի պարտաւորութեան՝ անոր զօրակցելու, ընդգծելով հայ ժողովուրդի անկախութեան եւ ազատութեան ձգտումը՝ Հայկ Նահապետի օրերէն սկսեալ մինչեւ հիմա: Իր խօսքի աւարտին, Ընկ. Գոսազեան եզրակացուց թէ «պարտութիւնները յաղթանակի վերածելու առաքինութիւնն է հայ ժողովուրդի գոյութեան առեղծուածը»:

Բանախօսէն ետք, Նաթակ Ծ. Վրդ. Յակոբեան տուաւ իր պատգամը, որ թելադրուած էր օրուան խորհուրդէն «Հերոսամարտները խորհրդանիշ են գերագոյն զոհողութեան» ըսաւ Հայր Սուրբը, դիտել տալով թէ նուազագոյն զոհողութիւն մըն է որ պիտի ընէ նոր սերունդը՝ հայերէն խօսելով եւ հայօրէն ապրելով:

Ա.Վ.

PARENTAN VIII MARDI GRAS FESTIVAL



Friday and Saturday
February 3-4, 1989
at the new
Newport Marriot
Newport, RI

Sponsored by the
Prelacy of the
Armenian Church
of America

Weekend package includes:

- Friday and Saturday nights lodging.
- Admission to the Talent Show followed by Armenian Hospitality, Music and Dancing.
- Saturday Night Dinner in the Atrium followed by Armenian Music and Dancing and the Grand Drawing.

\$140. per person — double occupancy

Art Exhibit • Book Store • Video Presentations throughout the weekend.

Hotel accommodations include pool, sauna and gym

Reservations deadline with \$40. deposit due before January 9, 1989.

Mail (tax deductible) check to Sts. Vartanantz Church, 402 Broadway, Providence, RI
For further information call the church office (401) 831-6399